



# ՊԱՏՐԻԱՐԻԱՐԿԱՏԻ ՆԱԶՈՑ

## ARMENIAN PATRIARCHATE

14 Սեպտեմբեր, 2016 թ.

Թուական  
Date

№ \_\_\_\_\_

Յարգարժան Տիար Կարեն Կարապետեան  
Վարչապետ Հայաստանի Հանրապետութեան  
Երեւան

Յարգելի Պարոն Վարչապետ,

Այսու կու գանք շնորհաւորել Ձեզ Հայաստանի Հանրապետութեան վարչապետի պատասխանատու պաշտօնին նշանակուելու առթիւ:

Այս բարեբաստիկ առիթով կը մաղթենք, որ Ձեր պաշտօնավարման շրջանը ըլլայ հայրենի պետականութեան ամրապնդման, տնտեսութեան զարգացման եւ մեր հայրենակիցներու ընկերային պայմաններու բարելաւման տարիներ:

Լիայոյս ենք, որ Ձեր նախորդներուն նման առանձնայատուկ վերաբերմունք եւ հասկացողութիւն պիտի ցուցաբերէք Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանին, ի մասնաւորի՝ Ժառանգաւորաց Վարժարանին եւ Ընծայարանին վերաբերող հարցերուն:

Անգամ մը եւս կը շնորհաւորենք Ձեզ եւ կը վստահեցնենք, որ Սուրբ Երկրին մէջ պիտի աղօթենք Ձեր քաջառողջութեան եւ պարտականութիւններու յաջող կատարման համար՝ յուսալով որ մը Ձեր ներկայութիւնը վայելել Սուրբ Երկրին մէջ:

Օրհնութեամբ՝

Նուրհան Արք. Մանուկեան

Երուսաղէմի Հայ Պատրիարք